# 506 «Սա է Ծառան Իմ, ում կհավանեմ,

1. «Սա է Ծառան Իմ, ում կհավանեմ,
Նա է Ընտրյալն Իմ, ում ձեռք կմեկնեմ:
Սա է Ծառան Իմ, Իմ Սուրբն է Նա:
Նա կազատի ձեզ ձեր մեղքերից,
Կույրեր կտեսնեն, համրեր կխոսեն,
Խավարում մարդիկ բարի լուր կլսեն»:

Իմ Տե՛ր Հիսուս,
Փա՛ռք քեզ, ալելուիա՛,
Փա՛ռք քեզ, ալելուիա՛,
Տեր Աստվա՛ծ իմ.
«Դուք սիրե՛ք Նրան՝ ձեր Արարչին,
Դուք հարգե՛ք Նրան՝ ձեր Փրկչին,
Իմ Որդուն՝ հեզ ու խոնարհ
Միածին Գառին»:

2. «Սա է Ծառան Իմ, Նրան եմ սիրում,
Ով կընդունի Նրան, կընդունի Ինձ:
Սա է Ծառան Իմ, Նա է Արդարը,
Ով կլսի Նրան, կլսի Ինձ:
Նա է մկրտում Հոգով, կրակով
Նրան, ով կուզի Իմ կամքը կատարել»: